# ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ. «ԻՆՁ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆԸ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑՆ Է»

## Կարևորը ծրագրեր հռչակելը չէ, այլ կատարելը

**Կուսակցությունների ու դաշինքների համամասնական ցուցակների հրապարակումն ամենատարբեր մեկնաբանությունների առիթ դարձավ: Մասնավորապես, արձագանքներ եղան «Միասնություն» դաշինքում ԳԱԱ նախագահի՝ առաջնային տեղ զբաղեցնելու շուրջ: Որոշեցինք ներկայացնել նաև իր՝ Ֆադեյ ՍԱՐԳՍՅԱՆԻ մեկնաբանությունը:**

**— Պարոն Սարգսյան, Դուք ի՞նչ դեր եք վերապահում ապագա խորհրդարանում «Միասնություն» դաշինքին, և ո՞րն է Ձեր համակրանքի հիմքը:**

— Ես իսկապես ամենամեծ համակրանքով եմ վերաբերվում երկու կուսակցություններին էլ, քանի որ դաշինքը հնարավորություն է ընձեռում, որպեսզի մարդիկ մտածեն աշխատանքի և արդյունք տալու մասին: Դաշինքի անդամներն ամեն ինչ պետք է անեն, որ մեր պետությունը կարողանա ժողովրդին սատարել, հանել այս ծանր վիճակից: Իր առաջին իսկ ժողովներից մեկում Հանրապետական կուսակցությունն անդրադարձավ գիտության և կրթության հարցերին: Դա մեզ համար շատ մեծ նշանակություն ունեցավ և դրանով իսկ հարգանք առաջացրեց իր նկատմամբ: Համատեղ շահագրգռվածությամբ քննարկել ենք գիտության զարգացման հարցերը: Գիտությունը մեր բյուջեից մնացորդային կարգով է ֆինանսավորվում, ուշադրության չի արժանանում, և դա ինձ համար ցավալի է: Կարծում եմ, որ Ժողովրդական կուսակցությունն էլ մտահոգ է գիտության զարգացման հարցերով: Իսկ ընդհանրապես կուսակցությունները չպետք է ինչ-որ գիծ տանեն կամ հեղափոխություն անեն: Բոլորի նպատակը մեկը պետք է լինի՝ երկիրը կարգին վիճակի բերել:

**— Գործող Ազգային ժողովում Դուք առաջադրվել էիք «Հանրապետություն» խմբակցության կողմից, հիմա՝ «Միասնության», ինչն էլ տարբեր մեկնաբանությունների առիթ է տվել: Դուք ինչպե՞ս եք նայում այդ հարցին:**

— Ինչ ասեմ՝ կարող են գրել, իրենց գործն է: Խնդիրն այն է, որ ես «Մտավորականների միության» կողմից էի առաջադրվել, նրանց ցուցակում առաջինն էի: Իսկ «Միասնության» երրորդ տեղի մասին իմացա մարտի 29-ին: Մինչ այդ չգիտեի նույնիսկ, որ պետք է լինեմ դաշինքի ցուցակում: Ամենահետաքրքիրն այն է, որ «Մտավորականների միությունն» էլ պետք է միանար դաշինքին: Թե ինչու այդ չեղավ, չգիտեմ:

Ես չեմ կարծում, թե նույնիսկ "ամենատարբեր" կուսակցությունների մեջ դաշինք չի կարող լինել: Երբ ինձ առաջարկեցին «Միասնության» անունից, ես չէի կարող մերժել մի կուսակցության, որ բավականին ուժ ունի և ցանկանում է գիտությանն օգնել, երբ իր առաջին ժողովն էլ նվիրել է գիտությանը: Այդպես էլ պայմանավորվել ենք «Մտավորականների միության» հետ:

Ինչ վերաբերում է այն ժամանակվա «Հանրապետությանը» և այս դաշինքին, ծրագրերը շատ չեն տարբերվում, այլ հարց է, թե ինչպես են դրանք կատարվում:

**— Դուք հուսախաբվե՞լ եք «Հանրապետությունից»:**

— Չեմ ուզում կրկին արտահայտվել: Ժամանակներ են եղել, որ «Հանրապետությունը» շեղվել է իր ծրագրից, բայց չեմ կարող ասել, թե այն պատճառով, որ ժողովրդի նկատմամբ վատ մտքեր ունեին:

Ինձ համար ամենակարևորը գիտության մասին օրենքի ընդունումն է: Դրանից կարևոր բան մեր գիտության համար ներկա փուլում չկա:

**— Ինչպե՞ս եք նայում այսօրվա քաղաքական դաշտին:**

— Մի ցանկություն ունեմ, որ լարվածությունը թուլանա և բոլորը համախմբված աշխատեն: Ես հակասությունների համար դաշտ չեմ տեսնում: Երբ մենք ջլատվենք, կջարդվենք: Սա է կարևորը:

Այնքան միամիտ չեմ, որ համոզված լինեմ, թե հակադրություն ու հակասություն չի լինի, բայց բոլորն էլ պետք է մի գծի վրա աշխատեն: Ես՝ որպես այս տարիքին հասած մարդ, մի բան կցանկանայի, որ ամեն մեկը մոռանար իր անձնական շահը և ելներ ընդհանուրից՝ շատ դեպքերում միմյանց զիջելով: Ես իմ ամբողջ կյանքն այդպես եմ ապրել:



*Զրուցեց*
*ՄԱՐԳԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆԸ*